# ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ք.Վանաձոր, «Օրրանի» Գրիգորյան կենտրոն, 21.08.2013թ. ժամը $11^{00}$

## ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻ
## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հարցի քննարկում:
   /ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Ա.Երիցյան/
   /ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա.Ասատրյան/

**Օրակարգային հարցից հետո նախարարների աշխատանքային գրաֆիկը ազատ է:**

2. Զբաղվածության բնագավառում պետական ծրագրերի մասին տեղեկատվության տրամադրում:
   /Զեկ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի «ՀՀ զբաղվածության գործակալության» Վանաձորի մարզային կենտրոնի տնօրեն Արա Առաքելյան/

3. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2013թ. Լոռու մարզային ծրագրի մասին:
   /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյան/

4. Հանձնաժողովի անդամ ունեցող կազմակերպությունների /մարզային գրադարան, ՀԿ-ներ, հիմնադրամ/ կողմից 2013թ. կատարված և ընթացիկ աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում.
   - Լոռու մարզային գրադարանի տնօրեն Անահիտ Քոչարյան
   - «Լիարժեք կյանք» ՀԿ /նախագահ Սուրեն Մաղաքյան/
   - «Լուսաստղ» ՀԿ /փոխնախագահ Անի Գաբրիելյան/
   - «Երուսաղեմի սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամ /տնօրեն Ժակլին Հեքիմյան/
   - «Արան» հաշմանդամների ՀԿ /նախագահ Սերգեյ Նազարյան/
   - «Մանկական կենտրոն» ՀԿ /նախագահ Թամարա Գրիգորյան/
   - Հայաստանի խուլերի միավորման Լոռու մարզային մասնաճյուղ /նախագահ Գագիկ Սերոբյան/
   - Հայաստանի կույրերի միավորման Լոռու մարզային մասնաճյուղ /նախագահ Հովիկ Ծատուրյան/

5. Ընթացիկ հարցեր:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 25
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Լոռու մարզային հանձնաժողովի ընդլայնված նիստի

21.08.2013թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Ա.Երիցյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա.Ասատրյանը, Հաշմանդամություն ունեցող անձանց /ՀՈՒԱ/ հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ ների, ՀՀ ԱԻ և ԱՍՀՆ ի տարածքային ծառայությունների ներկայացուցիչներ, ԶԼՄ ների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հարցի քննարկում:
/ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Ա.Երիցյան/
/ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա.Ասատրյան/

**Օրակարգային հարցից հետո նախարարների աշխատանքային գրաֆիկը ազատ է:**

2. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2013թ. Լոռու մարզային ծրագրի մասին: /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյան/
3. Հանձնաժողովի անդամ ունեցող կազմակերպությունների /մարզային գրադարան, ՀԿ-ներ, հիմնադրամ/ կողմից 2013թ. կատարված և ընթացիկ աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:
4. Ընթացիկ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. ՀՈՒԱ հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանին՝

ա/ Համապատասխան տեղեկատվություն տրամադրել Վանաձոր և Սպիտակ համայնքներում «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագրի փոքր դրամաշնորհների շրջանակներում ֆինանսավորվող սոցիալական ձեռնարկությունների կազմակերպման մասին:

բ/ Նախապատրաստել այցելություն «Լիարժեք կյանք» ՍՀԿ-ի կողմից երեխաների Ստեփանավան համայնքում գործող ամառային ճամբար:

2. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ս.Խալաթյանին՝

Համապատասխան տեղեկատվություն տեղադրել մարզպետարանի կայք էջում՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Ա.Երիցյանի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա.Ասատրյանի ՀՀ Լոռու մարզ կատարած այցի մասին՝ հանրային իրազեկումն ապահովելու նպատակով:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ.՝ Վ.Ջաղինյան
հեռ.՝ /0322/ 2-33-99